3-րդ տարբերակ
Ջանի Ռոդարի
Չիպոլինոյի արկածները (հատված)

Լիմոնուկները գյուղ հասան հաջորդ օրը և տեղնուտեղը գյուղում կարգ ուկանոն հաս տատեցին. շրջեցին բոլոր տները և ով պատահեց՝ ձերբակալեցին։
Առաջին բանտարկվածներից էր վարպետ Խաղողը։ Կոշկակարը բիզը հետը վերցրեց, որ ազատ ժամանակ ծոծրակը քորի, և հետևեց ոստիկաններին։ Բայց Լիմոնուկները նրա բիզը խլեցին։
— Դու հետդ զենք վերցնելու իրավունք չունես, — ասացին նրանք վարպետ Խաղողին։
— Իսկ ինչո՞վ ծոծրակս քորեմ։
— Հենց որ քորվել ուզենաս, ասա մեր պետերից մեկն ու մեկին։ Տե՛ս թե մենք այն ժամանակ քո գլուխը ոնց կքորենք։
Եվ Լիմոնուկն իր սրածայր թրով խուտուտ տվեց կոշկակարի ծոծրակը։
Պրոֆեսոր Տանձին էլ ձերբակալեցին։ Սա խնդրեց, որ թույլ տան՝ հետը վերցնի ջութակն ու մի մոմ։
— Մոմն ի՞նչ ես անում։
— Կինս ասում է, թե ամրոցի նկուղում շատ մութն է, իսկ ես պիտի նոտաներ սովորեմ։
Մի խոսքով, գյուղի բոլոր բնակիչները ձերբակալվեցին։ Փրկվեցին միայն սինյոր Սիսեռիկը, որովհետև նա փաստաբան էր, և սոխ Պրասը, որին պարզապես չգտան։
Իսկ սոխ Պրասը չէր էլ թաքնվել։ Նա հանգիստ նստած էր իր պատշգամբում։ Նրա բեղերը ձգված էին պարանի փոխարեն և դրանց վրա սպիտակեղեն էր փռված։
Սավանները, շապիկներն ու գուլպաները տեսնելով՝ Լիմոնուկները անցան նրա մոտով և այդպես էլ չնկատեցին տան տիրոջը։
Քավոր Դդումը գնում էր Լիմոնուկների հետևից և իր սովորության համաձայն խոր հոգոց հանում։
— Ինչո՞ւ ես այդքան հառաչում, — խստորեն հարցրեց Սպան։
— Ինչպե՞ս չհառաչեմ։ Ամբողջ կյանքում աշխատել եմ և միայն հառաչանքներ եմ հավաքել։ Օրական մի հառաչանք... Հիմա մի քանի հազար հառաչանք ունեմ կուտակած։ Պետք է, որ մի կերպ նրանց օգտագործեմ։
Կանանցից ձերբակալեցին միայն սանամեր Դդումին, և քանի որ սա հրաժարվեց բանտ գնալ, խփելով գցեցին ցած, և նա այդպես մինչև ամրոց գլորվեց։ Դե նա այնքան կլոր էր, ո՛ր...
Բայց ինչքան էլ Լիմոնուկները խորամանկ էին, էլի նրանց չհաջողվեց Չիպոլինոյին ձերբակալել, չնայած որ նա մի Բողկ անունով աղջկա հետ նստած էր ցանկապատին և կամակոր հայացքով նայում էր ոստիկաններին։
Ցանկապատի մոտով անցնելիս Լիմոնուկները նույնիսկ նրան ու Բողկին հարցրին, թե մոտերքում չե՞ն տեսել մի վտանգավոր խոռվարարի՝ Չիպոլինո անունով։
— Տեսե՛լ ենք, տեսե՛լ, — ճղճղացին նրանք, — նա քիչ առաջ թաքնվեց ձեր սպայի եռանկյունի գլխարկի տակ։
Եվ բարձր ծիծաղելով, երեխաները հեռու փախան։
Նույն օրը Չիպոլինոն ու Բողկը գնացին ամրոցի կողմը հետախուզության։ Չիպոլինոն որոշեց ինչ գնով էլ լինի գերիներին ազատել, իսկ Բողկը, հասկանալի է, խոստացավ ամեն ինչում օգնել նրան։

1. Գյուղում կարգ ու կանոն հաստատելու համար ի՞նչ էին անում Լիմոնուկները։

   Գյուղում կարգ ու կանոն հաստատելու համար Լիմոնուկները ձերբակալեցին ում, որ տեսան։

2. Պրոֆեսոր Տանձն ինչո՞ւ էր մոմն ուզում իր հետ վերցնել։
ա) Վախենում էր մթությունից։
բ) Մտածում էր՝ պետք կգա։
գ) Նա ուր գնում էր, մոմն իր հետ տանում էր։
դ) Ցանկանում էր նոտաներ սովորել։

3. Ինչո՞ւ Լիմոնուկները չկարողացան ձերբակալել սոխ Պրասին։

Որովհետև սոխ Պրասին չգտան։ Իսկ սոխ Պրասը նստած էր իր պատշգամբում։ Նրա բեղերը ձգված էին պարանի փոխարեն և դրանց վրա սպիտակեղեն էր փռված։՝ Լիմոնուկները տեսնելով անցան նրա մոտով և այդպես էլ չնկատեցին նրան։

4. Դո՛ւրս գրիր քեզ դուր եկած հատվածն ու վերնագրի՛ր։

Չիպոլինոն եռանկյունի գլխարկի տակ

Ցանկապատի մոտով անցնելիս Լիմոնուկները նույնիսկ նրան ու Բողկին հարցրին, թե մոտերքում չե՞ն տեսել մի վտանգավոր խռովարարի՝ Չիպոլինո անունով։
— Տեսե՛լ ենք, տեսե՛լ, — ճղճղացին նրանք, — նա քիչ առաջ թաքնվեց ձեր սպայի եռանկյունի գլխարկի տակ։
Եվ բարձր ծիծաղելով, երեխաները հեռու փախան։

5. Ավելացրո՛ւ բառեր, որոնք պատասխանեն *ինչպիսի՞* հարցին.
բարձր ծիծաղ
փոքր նկուղ
մեծ դդում
կլոր գլխարկ։

6. Մեկ բառով գրի՛ր՝
հարց տալ-հարցնել
մութն ընկնել-մթնել
կռիվ անել-կռվել
բարձր հասակ ունեցող-բարձրահասակ
խնձորի ծառ-խնձորենի

7. Ասացվածքները գտի՛ր՝

ձմերուկ, մի, երկու, ձեռքով, բռնի, չես
չի լինի, շունը, կծան. հաչան
փոս, ուրիշի, մեջը, փորողը, համար, կընկնի, ինքը:

Փոս փորողը ինքը մեջը կնկնի:

Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի:

Ուրիշի համար շունը կծան, հաչան չի լինի:

8.Բառերը բացատրի՛ր՝
երկարականջ-երկար ականջներ ունեցող
անթև-թևեր չունեցող
կարմրագույն-կարմիր գույն ունեցող
նավակ-ջրային փոխադրամիջոց

9. Գրի՛ր հետևյալ բառերին իմաստով մոտ բառեր՝
լուսաբաց-առավոտ
խնդրել-աղաչել
ճամփա-ուղի
գեղեցիկ-սիրուն
մտածել-մտասուզվել
ուրախանալ-զվարճանալ